



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Բարեփոխում և զարգացում» իրավապաշտպան ՀԿ

Գործընկեր՝ Գյումրու «Կանթեղ» մանկապատան եկան ՀԿ

Ծ Ր Ա Գ Ր Ա Յ Ի Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շիրակի մարզի «Բարեփոխում և զարգացում» իրավապաշտպան և «Գյումրու «Կանթեղ» մանկապատանեկան» հասարակական կազմակերպությունները համատեղ 2016թ. ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը իրականացրել են «Շիրակի և Արագածոտնի մարզերի հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը, որպես հակակոռուպցիոն դիմադրողականություն առողջապահական գործընթացներում» ծրագիրը, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,489,200 ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը:

Ծրագրի նպատակն էր՝

Նվազեցնել Շիրակի և Արագածոտնի մարզերում առողջապահական գործընթացներում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը՝ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներն ու արտոնությունները պաշտպանելու միջոցով:

Խնդիրները՝

1. Բացահայտել առողջապահական գործընթացներում հնարավոր կոռուպցիոն մարտահրավերները, կոռուպցիա ծնող պատճառները, դրանց հետևանքները, ինչպես նաև կանխարգելել առաջացման հիմնական խոչընդոտները:
2. Բարձրացնել հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկվածության մակարդակը, իրենց իրավունքների վերաբերյալ՝ ուսուցման և քարոզչության միջոցով, ինչպես նաև սերմանել հարգանք իրենց արժանապատիվ ու հասարակության լիարժեք քաղաքացի զգալու համար:
3. Հաշմանդամություն ունեցող կանանց հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ պահելու, իրենց իրավունքներն ու շահերը բուժ. հաստատություններում, առողջարանային-վերականգնողական կենտրոններում պաշտպանելու համար ստեղծվել է ԹԵԾ ԳԻԾ /060 73 70 03/ հեռախոսահամարով, որը գործում է աշխատանքային բոլոր օրերին և ժամերին, արագ արձագանքման կենտրոնի կողմից:

Ծրագրի մեկնարկի կապակցությամբ մամլո ասուլիս է տեղի ունեցել «Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ»-ում, որի ընթացքում հանրությանը տեղեկացվել է ծրագրի մեկնարկի մասին:

Ծրագրի իրականացման ընթացքում՝ նպատակին հասնելու համար իրականացվել է ծրագրով նախատեսված միջոցառումները, որոնց արդյունքում հնարավորինս հասել ենք ծրագրի նպատակին, մասնավորապես այն, որ մոնիթորինգի է ենթարկվել և բացահայտվել է Շիրակի և Արագածոտնի մարզերում առողջապահական գործընթացներում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը՝ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների ու արտոնությունների հետ կապված:

Բացահայտվել է առողջարանների հետ կապված պետական պատվերի շրջանակներում տրամադրվող ուղեգրերի մատչելիության և խտրականության հիմնական խնդիրը, հանդիպումներ են տեղի ունեցել նշված երկու մարզերի համայնքների թվով 100 հաշմանդամություն ունեցող կանանց հետ նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար, հանդիպումներ են տեղի ունեցել նշված մարզերի բուժ. հաստատությունների և նրանց վերադաս մարմինների հետ հիմնախնդրի լուծման և բացահայտմանն ուղղված միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Թեժ գծի միջոցով ծրագրի իրականացման ընթացքում ստացվել է մոտ 150 ահազանգ, որից 63 վերաբերելի է եղել մեր ծրագրի նպատակին, որոնք ամբողջությամբ բավարարվել և ընթացք է տրվել, իսկ մնացած ահազանգերը անկախ այն հանգամանքից որ վերաբերելի չի եղել ծրագրին, սակայն ուղղված է եղել առողջապահությանը, ցուցաբերվել է խորհրդատվություն և փորձել ենք աջակցել և հարցը կարգավորել:

Ծրագրի արդյունավետությունը և շարունակելիությունը ապահովելու նպատակով մինչև օրս գործում է թեժ գիծը և ավելի մեծ քանակությամբ է ստանում զանգեր և ավելի մեծ շարժ է տեղի ունենում ծրագրի ավարտից հետո, ինչին դարձվում է ուշադրություն:

Ծրագրի կարևոր բաղադրիչ հանդիսացող «Շիրակի և Արագածոտնի մարզերի հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը, որպես հակակոռուպցիոն դիմադրողականություն առողջապահական գործընթացներում մոնիթորինգի» արդյունքների ԶԵԿՈՒՅՑԸ տպագրվել և ծրագրի ամփոփ շնորհանդեսին, որը տեղի է ունեցել Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ-ի Շիրակի մարզային մասնաճյուղի գրասենյակում, ներկայացվել է հասարակությանը, իսկ օրինակներ տրամադրվել են նաև Շիրակի և Արագածոտնի մարզպետարաններին, բուժ. հաստատություններին և առողջարաններին՝ ծանոթանալու նպատակով: Զեկույցը կցվում է սույն հաշվետվությանը որպես **Հավելված 1**:

Ծրագրի ղեկավար՝

Արմեն Գաբրիելյան

01. օգոստոսի 2016թ.

ք. Գյումրի